ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Խաբէութիւն Բարեկամի:

Սէրըն անգութ խաղայր օր մի
Զմեղուանոցաւ շուրջանակի,
Որք մրտագիր պարապէին
Ցարութեստանոց անոյշ նիւթին:
Խեռ այս մանկիկ և ըստահակ
Զուարճանայր յիւր ախորժակ՝
Լինել գործոյն խափանարար
Գումարտակին այն օգտակար:
Մին 'ի մեղուաց երբ իմացաւ
Զանձըն խոցեալ Սիրոյն փըքնաւ,
Ի խոց գաժան՝ բայց ոչ 'ի մահ,
Ցորմէ հարաւ եհար 'ի ճահ:
Բայց 'ի վերայ խոր հարուածոյն
Ընդ իւր կենաց եթող և զթոյն.
Ո՛վ չեռ և քէն վատաբաղդիկ.
Մեռաւ այսպէս վաղամեռիկ:
Յայնժամ այնպէս գոչեաց սաստիկ
Սէրըն հարեալ յայն նետ փոքրիկ,
Մինչև գոգցես ձիչ իւր գընայր
Ցերրորդ երկին կոչել զիւր մայր:
Գեղեցկաձեւմ յայն բուրաստան
Ի ծաղկաւէտ յանցըս նորայն
Ընդ հովանեաւ սաղարթացեալ
Ճիմեր փիլլիս ընկերացեալ
Ընդ սիրելի՝ բայց տըխրագին
Ցոյըս մըտաց իւր խորհըրդին:
Առ ձիչ Սիրոյն 'ի գուրս ել նա.
Բայց ընդ լըսել ըզդէպ սորա,
Խայտայր 'ի սիրտ և վա՜շ կարգայր
Ի տեսանել՝ զի այնպէս լայր
Խոցողն անգութ, յորմէ և նա
Էր 'ի յոգի խոցեալ դըժնեայ.
Բայց նըկարեալ գութ առ երես,
Զայն արձակէ առ նա այսպէս.
“ Ո՛հ, տառապեալ Մանկիկ դու Սէր,
Մի՛ այլ այդպէս դու արտասուեր.
Ոչ մեծ ինչ է վընաս քոյին,
Ոչ դու մեռցիս ամենևին:
Ո՛հ, տառապեալ Մանկիկ դու Սէր,
Մի՛ այլ այդպէս դու արտասուեր ”:
Սէրըն յայնժամ մըխիթարի
Երբ ըզմեղուին եստես ըզդի.
Թըռչի յերկին՝ դեղ ոչ խընդրէ,
Ըյոչափ միայն նըմին շատ է.
Զըւարթացեալ ընդ չար այլոյ
Քան ընդ անձին օգուտ բարւոյ:
Ընդ միտ յայնժամ որոճելով
Եւ տըխրագին հառաչելով՝
Առաց Փիլլիս՝ արդարապէս
Ըզգօնացեալ 'ի դիպուածէս.
“ Բա՜բէ, ո՛րչափ լաւ ես իսկ էր
Առ դիւր հանգիստ սրտիցըս մեր,
Եթէ Մեղուն կենդանի կայր,
Եւ ըստահակ Սէր մահանայր:
Խոցէ Մեղուն, և Սէր խոցէ.
Եւ սա և նա նետս արձակէ.
Բայց թէ մեղուն հազիւ գըծէ,
Սէր 'ի քո սիրտ միշտ թափանցէ:
Հակիրճ է ցաւ, որով մեղուին
Տանջէ ըզմեզ խայթուած նըրբին,
Սակայն Սիրոյն խոպառ տևէ.
Ա՛յս իսկ այս՝ ա՛յս զիս տանջէ:
Բա՜բէ, ո՛րչափ լաւ ես իսկ էր
Առ դիւր հանգիստ սըրտիցըս մեր,
Եթէ մեղուն կենդանի կայր,
Եւ ըստահակ Սէր մահանայր ”:

Հ. ՄԱՆ. ՋԱԽՋԱԽ.

Վերթաւորութիւն:

Եհարց երբեմն հիւանդութիւն առողջութեան.
Զի՞նչ կարծես զիս, ասա՛ քոյին թէ բարեկամ:
Պատասխանեաց. Մարդկան ասոխ, ինձ բարեկամ.
Զի զիս յիշեն միայն 'ի քումըդ գալըստեան:

Ի Մանկին Մահուն:

Ակընկառոյց դուստր արքային դըշխոյն Մեմ-
փեայ
Ի յալէծուփն 'ի տապանակ անդր 'ի պըրտուեայ,
Հայի 'ի նմա ընկողմանեալ մանկիկ տըղայ
Զըքնաղագեղ խարտեաշ կարմրայտ և բոցակնեայ:
Առնու 'ի գիրկս ողջագուրէ զնա և գըգուէ,
Եւ 'ի քաղցրիկ շարժեալ 'ի ժպիտ խանդաղատէ.
Իսկ նա ընդ խաղ ձըգեալ յանզօր 'ի ձեռանէ
Կռուփս և ապտակս, հերքէ զդըշխոյն և հարկանէ:
Ժըպտիս դըշխոյդ. զի՞արդ աղէ ոչ իմանաս
Քանի դըժնեայ սպառնայ հարուածս առ 'ի յա-
պայս
Ձեռն այն հըզօր ածեալ ձըգել 'ի քոյդ դարպաս,
Յորժամ 'ի ցուպն ըսպառաղէն 'ի հրաշական,
Դա սպասաւոր աստուածասաստ եղեալ ցասման
Արկցէ ընդ հօր քում ծովամոյն զՄեմփիս համայն:

Ի ձայն Սամփսոնի :

Անյաղթ ախոյեան քաջ եբրայեցին
Յաղթող անթըլփատ այլազգեաց տոհմին,
Որ այնչափ հարուածս հասոյց 'ի նոսին
Եւ բարձ ըզԴագոյ ըզգուրս ցաս անձին :
Խաւարեալ յաչաց, գերեալ 'ի կապան,
Ի ծաղր արհամարհ 'ի տուն դագոնեան,
Սակայն և անգէն սիրան արիական
Պարտէ վըէժխնդիր ըզբախտ իւր դաժան :
Զոտսըն կորովի պընդեալ 'ի գետին
Զըգէ յաղթ բազկօք ըզսիւնս երկոսին.
Անկանին տապալ, 'ի ներքոյ բեւեռին
Ճըմլեալ զայլազգեաց բազմամբոխ խուժան.
Ճըմլի և Սամփսոն, վըշտացեալ միայն
Զի զաւրսաւ նոցին չետես 'ի մահուան :

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

Աշխարհիս վրայ եղած ամենէն երևելի Սիւներուն չափերը :

ԱՆՈՒՆ	ՍՏՈՐԻՆ ՏՐԱՄԱԳԻԾ	ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ
Լոնտրայի Սիւն	4մետր 57	61մետր 61
Նաբոլէոնի Սիւն 'ի Պուլօնեը	4մ , 15	53մ , 60
Աղեքսանդրեան Սիւն 'ի Բեդրբուրկ	3մ , 43	47մ , 00
Անտոնինեան Սիւն 'ի Հռոմ	3մ , 57	44մ , 82
Աւստերլիցի Սիւն 'ի Բարիզ	3մ , 67	44մ , 17
Տրայանեան Սիւն 'ի Հռոմ	3մ , 63	43մ , 70
Դաշնակցական Սիւն 'ի Լոնտրա	3մ , 53	41մ , 25
Յուլիսեան Սիւն 'ի Բարիզ	3մ , 60	50մ , 00
Տէ Մեդիչիս Սիւն 'ի Բարիզ	2մ , 92	32մ , 48
Նաբոլէոնեան Սիւն 'ի Գորսիգա	2մ , 45	32մ , 48
Գահոյից Սիւն 'ի Բարիզ	3մ , 29	30մ , 53
Պոմպէի Սիւն յԱղեքսանդրիա Եգիպտոսի	2մ , 65	28մ , 75

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

Ջրէ ուրագ :

Ա'ռ ապակի խողովակ մը ութ բթաչափ երկայնութեամբ և ինը գծաչափ տրամագծով, որուն մէկ ծայրը գոց ըլլայ, և մէկալ ծայրը հաւկթաձև ուռած և ամենանեղ խողովակով մը վերջացած : Նոր վեցերորդ մասը այն նեղ ծակէն ջրով լեցուր, և մնացած տեղւոյն օդն ալ դատարկէ օդահան մեքենայով, և այն նեղ բերանը մէկէն ճրագի բոցով գոցէ : Թէ որ լաւ կերպով կրցեր ես դատարկել օդը, երբոր այս խողովակը հորիզոնաբար բռնես և յանկարծ յանկարծ ուղղահայեաց դրքով դարձընես՝ հաւկթաձև ուռեցքը դէպ 'ի վար, պղնձի ուրագի ձայն կը լսես, և միանգամայն պղնձի ցընցմունք մը : — Թէ որ ջրին տեղ սնդիկ լեցընես, ձայնը աւելի ուժով կ'ըլլայ. և թէ որ սնդիկը զուտ ըլլայ և օդը լաւ պարպուած, շիշին մէջ մութ տեղ լուսաւոր հետք մը կը ձգէ :